Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Սլովենիայի Հանրապետությունը, ցանկանալով կնքել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիա,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության, նրա քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների կողմից սահմանված՝ եկամտից և գույքից գանձվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:
2. Եկամտի և գույքի վրա սահմանված հարկեր են համարվում եկամտի ընդհանուր գումարի, գույքի ընդհանուր արժեքի, կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի վրա սահմանված բոլոր տեսակի հարկերը, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամուտների, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքաճի վրա սահմանված հարկերը:
3. Սույն Կոնվենցիան կիրառվում է գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ, մասնավորապես՝
ա) Սլովենիայում.
i) իրավաբանական անձանց եկամտի վրա սահմանված հարկ,
ii) ֆիզիկական անձանց եկամտի վրա սահմանված հարկ,
iii) գույքահարկ
(այսուհետ՝ սլովենական հարկ):
բ) Հայաստանում.
i) շահութահարկ,
ii) եկամտահարկ,
iii) գույքահարկ
(այսուհետ՝ հայկական հարկ):
4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաև ցանկացած նույնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք սահմանվում են սույն Կոնվենցիան ստորագրելուց հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ծանուցում են միմյանց իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին:

Հոդված 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե համատեքստով այլ բան չի պահանջվում՝
ա) «Սլովենիա» տերմինը նշանակում է՝ Սլովենիայի Հանրապետություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ Սլովենիայի տարածքը, ինչպես նաև ջրային տարածքները, որոնց նկատմամբ Սլովենիայի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքներն ու իրավազորությունը՝ ներքին օրենսդրությանը և միջազգային իրավունքին համապատասխան.
բ) «Հայաստան» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն և երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ ցամաքային, ջրային տարածքը, ընդերքը

և օդային տարածքը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքներն ու իրավազորությունը՝ ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքին համապատասխան.

գ) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, համատեքստից կախված, նշանակում են՝ Սլովենիա կամ Հայաստան.

դ) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում.

ե) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ.

զ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները համապատասխանաբար նշանակում են՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն.

է) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից շահագործվող նավով, օդանավով կամ ավտոճանապարհային տրանսպորտային միջոցով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ նավը, օդանավը կամ ավտոճանապարհային տրանսպորտային միջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև.

ը) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Սլովենիայի դեպքում՝ Սլովենիայի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կամ դրա լիազորված ներկայացուցիչը.

ii) Հայաստանի դեպքում՝ Ֆինանսների նախարարությունը և Պետական եկամուտների կոմիտեն կամ դրանց լիազորված ներկայացուցիչները.

թ) «քաղաքացի» տերմինը, Պայմանավորվող պետությունների մասով, նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) Պայմանավորվող պետության գործող օրենքների հիման վրա իր, որպես այդպիսին, կարգավիճակը ստացած ցանկացած իրավաբանական անձ, գործընկերություն կամ ասոցիացիա.

ժ) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեության իրականացում:

2. Ինչ վերաբերում է Պայմանավորվող պետության կողմից Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելուն, ապա Կոնվենցիայում չսահմանված ցանկացած տերմին, եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ունի այն նշանակությունը, որն այն ունի այդ պահին տվյալ պետության օրենսդրության համաձայն այն հարկերի նկատմամբ, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան, ընդ որում՝ այդ պետությունում գործող հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ պետության այլ օրենքներով՝ այդ տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

Հոդված 4

ՌԵԶԻԴԵՆՏԸ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով՝ «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որն այդ պետության օրենքների համաձայն ենթակա է հարկման այդ պետությունում իր մշտական բնակության, գտնվելու վայրի, ստեղծման (գրանցման) վայրի, կառավարման վայրի կամ ցանկացած այլ համանման չափորոշիչի հիման վրա, ինչպես նաև ներառում է այդ պետությունը և նրա իշխանության տեղական մարմինը: Սակայն, այդ տերմինը չի ներառում որևէ անձ, որն այդ պետությունում ենթակա է հարկման միայն այդ պետության աղբյուրներից ստացված եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի առնչությամբ:

2. Եթե 1-ին պարբերության դրույթների հիման վրա անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ՝

ա) նա համարվում է այն պետության ռեզիդենտ, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, իսկ եթե նա երկու պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա համարվում է այն պետության ռեզիդենտ, որի հետ իր անձնական և տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են.

բ) եթե հնարավոր չէ որոշել այն պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա պետություններից ոչ մեկում չունի իր տրամադրության տակ մշտական կացարան, ապա նա համարվում է այն պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է.

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու պետություններում էլ կամ եթե նա սովորաբար չի բնակվում դրանցից և ոչ մեկում, ապա նա համարվում է այն պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է.

դ) եթե նա երկու պետությունների քաղաքացի է կամ դրանցից ոչ մեկի քաղաքացի չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Եթե 1-ին պարբերության դրույթների հիման վրա ֆիզիկական անձից տարբերվող անձը երկու

Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, ապա նա համարվում է միայն այն պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա փաստացի կառավարման վայրը:

Հոդված 5

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով՝ «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության ֆիքսված վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը մասնավորապես ներառում է՝

ա) կառավարման վայրը,

բ) մասնաճյուղը,

գ) գրասենյակը,

դ) գործարանը,

ե) արհեստանոցը և

զ) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների հետազոտման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը, կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական կամ խորհրդատվական գործունեությունը համարվում է մշտական հաստատություն, միայն եթե այդպիսի հրապարակը, ծրագիրը կամ գործունեությունը Պայմանավորվող պետության տարածքում շարունակվում է վեց ամսից ավելի ժամանակահատված:

4. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում՝

ա) շինությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով.

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով.

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով.

դ) գործունեության մշտական վայրի պահպանումը՝ ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի բացառապես գնման կամ տեղեկատվություն հավաքելու նպատակով.

ե) գործունեության մշտական վայրի պահպանումը՝ ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով.

զ) գործունեության մշտական վայրի պահպանումը՝ բացառապես ա) - ե) ենթապարբերություններում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության մշտական վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Անկախ 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներից՝ եթե անձը, որը չի հանդիսանում անկախ կարգավիճակով գործակալ, որի նկատմամբ կիրառվում է 6-րդ պարբերությունը, գործում է ձեռնարկության անունից, և ունի ու սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող այդ պետությունում՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության մասով, բացառությամբ երբ այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ պարբերությունում նշվածով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության մշտական վայրի միջոցով, այդ պարբերության դրույթների համաձայն այդ գործունեության մշտական վայրը չի վերածում մշտական հաստատության:

6. Ձեռնարկությունը չի համարվում Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ այն ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ պետությունում բրոքերի, առևտրային գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում: Սակայն, երբ նման գործակալի գործունեությունը լիովին կամ գրեթե լիովին իրականացվում է այդ ձեռնարկության և այլ ձեռնարկությունների անունից, և ձեռնարկության և գործակալի միջև իրենց առևտրային և ֆինանսական հարաբերություններում առկա են կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կսահմանվեին անկախ ձեռնարկությունների միջև, նա, այս պարբերության իմաստով, չի դիտարկվի որպես անկախ կարգավիճակով գործակալ:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է դրա կողմից, կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

Հոդված 6

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որ դրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է տվյալ գույքը: Տերմինն ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտը) և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Նավերը, օդանավերը և ավտոճանապարհային տրանսպորտային միջոցները չեն դիտարկվում որպես անշարժ գույք:

3. 1-ին պարբերության դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալու դիմաց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ պարբերությունների դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՇԱՀՈՒՅԹԸ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձևով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Պահպանելով 3-րդ պարբերության դրույթները՝ եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող միանգամայն ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցնել մշտական հաստատության ձեռնարկատիրական գործունեության նպատակներով կատարված ծախսերը (բացառությամբ այն ծախսերի, որոնք չէին նվազեցվի, եթե այդ մշտական հաստատությունը Պայմանավորվող պետության առանձին ձեռնարկություն լիներ), այդ թվում՝ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից՝ դրանք կատարված են այն պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, թե այլուր:

4. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության տարբեր ենթամասերի միջև ձեռնարկության ընդհանուր շահույթի համամասնական բաշխման հիման վրա, ապա 2-րդ պարբերությունում ոչինչ չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը՝ որոշելու հարկման ենթակա շահույթը այդպիսի բաշխման ընդունված եղանակով: Այնուամենայնիվ, բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածի սկզբունքներին:

5. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար միայն ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ պարբերությունների նպատակներով՝ մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշվում է տարեցտարի միևնույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր և բավարար պատճառ:

7. Եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնք առանձին քննարկված են սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային միջոցների շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

2. 1-ին պարբերության դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային գործակալությունում մասնակցությունից ստացված շահույթի նկատմամբ:

Հոդված 9

ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Եթե՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և երկու դեպքերից յուրաքանչյուրում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող էին լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով նման ձևով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Եթե Պայմանավորվող պետությունը այդ պետության ձեռնարկության շահույթի կազմում ընդգրկում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս պետությունում և այդ ձևով ներառված շահույթի բոլոր տարրերը համարվում են շահույթ, որը պետք է հաշվեգրված լիներ առաջինը հիշատակված պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև փոխհարաբերությունները լինեին նույնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև է, ապա այդ մյուս պետությունը կատարում է այդպիսի շահույթից իր կողմից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում, եթե այդ պետությունը համարում է այդ ճշգրտումը հիմնավորված: Այդպիսի ճշգրտումը որոշելիս պետք է հաշվի առնվեն սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները պետք է, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցեն միմյանց հետ:

Հոդված 10

ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ պետության օրենքների համաձայն, բայց եթե ստացողը շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի՝

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատերն ընկերություն է (ընկերակցությունից բացի), որն ուղղակիորեն տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության գույքի առնվազն 25 տոկոսը.

բ) շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը՝ մյուս բոլոր դեպքերում:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն այս սահմանափակումների կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

Սույն պարբերությունը չի ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում գործածվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից եկամուտը՝ այն պետության օրենքների համաձայն,

որի ռեզիդենտն է բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և մասնակցությունը, որի կապակցությամբ վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Եթե Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, ապա այդ մյուս պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները, բացառությամբ երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, և չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11

ՏՈԿՈՍՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն, այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են՝ այդ պետության օրենքների համաձայն, բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն այս սահմանափակումների կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Անկախ 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներից, Պայմանավորվող պետությունում առաջացող տոկոսներն ազատվում են հարկից այդ պետությունում, եթե.

ա) տոկոսը վճարողը Պայմանավորվող պետության կառավարությունն է, կամ դրա քաղաքական ստորաբաժանումը, կամ իշխանության տեղական մարմինը, կամ կենտրոնական բանկը.

բ) տոկոսը վճարվում է մյուս Պայմանավորվող պետության կառավարությանը, կամ դրա քաղաքական ստորաբաժանմանը, կամ իշխանության տեղական մարմնին, կամ կենտրոնական բանկին.

գ) տոկոսը վճարվում է այն փոխառության մասով, որը կատարվել, հաստատվել, երաշխավորվել կամ ապահովվել է մյուս Պայմանավորվող պետության հաստատության կողմից՝ այդ պետության հաշվին՝ լիազորված լինելով ապահովագրության և միջազգային բիզնես գործարքների ֆինանսավորման մասին ներպետական օրենսդրությանը համապատասխան:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից, անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերից, պարտատոմսերից և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներից ու մրցանակներից: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակներով որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով և պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ պետության ռեզիդենտ է: Եթե, այնուամենայնիվ, տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը և որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով, պարտապահանջին վերաբերող՝ վճարվող տոկոսների գումարը

գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

Հոդված 12

ՌՈՅԱԼԹԻՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթիները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. Սակայն, այդպիսի ռոյալթիները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ պետության օրենքներին համապատասխան, բայց եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիների համախառն գումարի 5 տոկոսը: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:

3. «Ռոյալթիներ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացված ցանկացած տեսակի վճարում՝ գրական, գեղարվեստական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների կամ հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների, ցանկացած արտոնագրի, ապրանքային նշանի, արդյունաբերական նմուշի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկությունների (նոու-հաու) օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար:

4. 1-ին և 2-րդ պարբերության դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են ռոյալթիները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում են ռոյալթիները, փաստացի կապված են այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթիները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողը հենց պետությունն է, նրա քաղաքական ստորաբաժանումը, իշխանության տեղական մարմինը կամ այդ պետության ռեզիդենտը: Սակայն, երբ ռոյալթիներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ռոյալթիներ վճարելու պարտավորությունը և այդպիսի ռոյալթիների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ռոյալթիները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկատվության համար վճարվող ռոյալթիների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

Հոդված 13

ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃԸ

1. 6-րդ հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների, կամ այդպիսի նավերի, օդանավերի կամ ավտոճանապարհային տրանսպորտային միջոցների շահագործմանը վերաբերող

շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ընկերության բաժնետոմսերի կամ այլ բաժնետիրական իրավունքների օտարումից ստացված արժեքի հավելաճը, որոնց արժեքի 50 տոկոսից ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացվում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում չնշված ցանկացած գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է օտարող անձը:

Հոդված 14

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Պահպանելով 15-րդ, 17-րդ, 18-րդ և 19–րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպով, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Անկախ 1-ին պարբերության դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը նշված պետությունում, եթե՝

ա) ստացողը հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրություն կատարելու ծախսերը չի կրում գործատուի՝ մյուս պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավի տախտակամածի վրա, օդանավում կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ Պայմանավորվող պետությունում:

Հոդված 15

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԸ

Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից, որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի կամ ընկերության նմատատիպ մարմնի անդամ ստացված տնօրենների հոնորարները և համանման այլ վճարումները կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

Հոդված 16

ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

1. Անկախ 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես արվեստի գործիչ, ինչպիսին է՝ թատրոնի, կինոյի դերասանը, ռադիոյի կամ հեռուստատեսության ոլորտի աշխատակիցները կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ իր իրականացրած անձնական գործունեությունից ստացված եկամուտը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Եթե արվեստի գործչի կամ մարզիկի, որպես այդպիսին, իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անհատապես արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, անկախ 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներից, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Անկախ 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներից՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից որպես արվեստի գործիչ կամ մարզիկ իր անձնական գործունեությունից ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ գործունեությունն իրականացվել է մյուս

Պայմանավորվող պետությունում երկու Պայմանավորվող պետությունների կողմից հավանության արժանացած մշակութային և մարզական փոխանակման ծրագրերի շրջանակներում:

Հոդված 17

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ

Պահպանելով 18-րդ հոդվածի 2-րդ պարբերության դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին՝ նախկինում կատարված վարձու աշխատանքի համար վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

ՀՈԴՎԱԾ 18

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. ա) Պայմանավորվող պետության, քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից այդ պետությանը, քաղաքական ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին պետական բնույթի գործառույթների իրականացման համար մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

բ) Սակայն այդպիսի աշխատավարձը, ռոճիկը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ պետությունում և այդ պետության ռեզիդենտ ֆիզիկական անձը՝

i) այդ պետության քաղաքացի է, կամ

ii) չի դարձել այդ պետության ռեզիդենտ՝ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Անկախ 1-ին պարբերության դրույթներից՝ Պայմանավորվող պետության, քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից, կամ նրանց կողմից ստեղծված միջոցներից այդ պետությանը, քաղաքական ստորաբաժանման կամ իշխանության մարմնին պետական բնույթի գործառույթների իրականացման համար մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

բ) Սակայն, այդպիսի կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձն այդ պետության ռեզիդենտն է ու քաղաքացին:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող պետության, նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց աշխատավարձի, ռոճիկի, կենսաթոշակի և համանման այլ վարձատրությունների նկատմամբ:

Հոդված 19

ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որը մյուս Պայմանավորվող պետությունում տեղակայված և այդ մյուս Պայմանավորվող պետության կառավարության կողմից ճանաչված համալսարանի, քոլեջի, դպրոցի կամ համանման այլ հաստատության հրավերով ժամանակավորապես գտնվում է այդ մյուս Պայմանավորվող պետությունում՝ բացառապես այդպիսի ուսումնական հաստատությունում դասավանդման կամ հետազոտական աշխատանքների նպատակով կամ այդ երկու գործընթացներում էլ, ազատվում է հարկումից այդ մյուս Պայմանավորվող պետությունում այդպիսի դասավանդման կամ հետազոտություն կատարելու համար ստացված վարձատրության մասով՝ իր առաջին ժամանման օրվանից 2 տարին չգերազանցող ժամանակահատվածով: Ֆիզիկական անձն օգտվում է սույն հոդվածի արտոնություններից միայն մեկ անգամ:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության դրույթները չեն վերաբերում հետազոտությունից ստացվող վարձատրությանը, եթե այդպիսի հետազոտությունը իրականացվում է ոչ հասարակական, այլ հիմնականում որոշակի անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

Հոդված 20

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ուսանողը կամ ստաժորը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ և որը գտնվում է առաջինը նշված պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, չի հարկվում այդ պետությունում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացված վճարումներից՝ պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջանում են այդ պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

Հոդված 21

ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի եկամտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չնշված տեսակները, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

2. 1-ին պարբերության դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և գույքը կամ իրավունքը, որոնց մասով վճարվել է եկամուտը, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 22

ԳՈՒՅՔԸ

1. 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում՝ Պայմանավորվող պետության ձեռնարկությանը պատկանող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մասը կազմող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով, օդանավերով կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցներով ներկայացված գույքը և այդպիսի նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է այդպիսի գույքի սեփականատեր ձեռնարկությունը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր տարրերը ենթակա են հարկման միայն այդ պետությունում:

Հոդված 23

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որը սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կարող է հարկվել մյուս Պայմանավորվող պետությունում, առաջինը նշված պետությունը թույլ է տալիս.

ա) այդ ռեզիդենտի եկամտի վրա սահմանվող հարկից նվազեցնել այդ մյուս պետությունում վճարված եկամտահարկին հավասար գումար.

բ) այդ ռեզիդենտի գույքի վրա սահմանվող հարկից նվազեցնել այդ մյուս պետությունում վճարված գույքահարկին հավասար գումար:

Սակայն, այդպիսի նվազեցումը ցանկացած դեպքում չպետք է գերազանցի մինչև նվազեցման տրամադրումը հաշվարկված եկամտահարկի կամ գույքահարկի այն մասը, որը վերագրվում է, հանգամանքներից կախված, եկամտին կամ գույքին, որը կարող է հարկվել այդ մյուս պետությունում:

2. Եթե սույն Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքն ազատված է այդ պետությունում հարկումից, ապա այդ պետությունը կարող է, ամեն դեպքում, այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի սահմանվող հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

Հոդված 24

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկվում այլ կամ ավելի խիստ որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, մասնավորապես, կապված ռեզիդենտության հետ, քան հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որին միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս պետության քաղաքացիները: Անկախ 1-ին հոդվածի դրույթներից՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեզիդենտ համարվող՝ քաղաքացիություն չունեցող անձինք չպետք է ենթարկվեն Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում այլ կամ ավելի խիստ հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, քան հարկումը և դրա հետ կապված պարտավորության կատարումը, որին ենթակա են այդ պետությունների քաղաքացիները միևնույն պայմանների դեպքում:

3. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս պետությունում չպետք է լինի պակաս բարենպաստ, քան համանման գործունեություն իրականացնող այդ մյուս պետության ձեռնարկության հարկումը: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ տրամադրելու մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին, քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա, հարկման նպատակներով այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին պարբերության, 11-րդ հոդվածի 7-րդ պարբերության կամ 12-րդ հոդվածի 6-րդ պարբերության դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված տոկոսները, ռոյալթին և այլ վճարումները, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը նշված պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկման ենթակա կապիտալի որոշման նպատակով, ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես որ պարտքը առաջինը հիշատակված պետության ռեզիդենտին:

5. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է այդ մյուս պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չպետք է առաջինը նշված պետությունում ենթարկվեն այլ կամ ավելի խիստ հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, քան առաջինը հիշատակված պետության այլ նման ձեռնարկությունները:

6. Սույն հոդվածի դրույթները, անկախ 2-րդ հոդվածի դրույթներից, կիրառվում են հարկերի ցանկացած տեսակի և ձևի նկատմամբ:

Հոդված 25

ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Եթե անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկմանը, ապա նա կարող է, անկախ այդ պետությունների ներպետական իրավունքով նախատեսված պաշտպանության միջոցներից, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ եթե իր գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին պարբերությանը՝ այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի քաղաքացին է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից հետո երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի, և եթե ինքն ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռք բերված համաձայնություն իրականացվում է անկախ Պայմանավորվող պետությունների ներպետական իրավունքում առկա որևէ ժամանակային սահմանափակման:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացած ցանկացած դժվարություն կամ խնդիր ձգտում են լուծել փոխադարձ համաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու ուղղությամբ:

4. Նախորդ պարբերությունների առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով՝ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ, ներառյալ՝ իրենցից կամ իրենց ներկայացուցիչներից բաղկացած համատեղ հանձնաժողովի միջոցով:

Հոդված 26

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն Կոնվենցիայի դրույթների կիրառման կամ ներքին օրենքների կիրարկման համար տեղեկատվություն են փոխանակում Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների անունից կիրառվող ցանկացած տեսակի և նկարագրության հարկերի վերաբերյալ՝ այնքանով, որքանով հարկումը չի հակասում Կոնվենցիային: Տեղեկատվության փոխանակումը 1-ին և 2-րդ հոդվածներով չի սահմանափակվում:

2. Պայմանավորվող պետության կողմից 1-ին պարբերության համաձայն ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ պետության ներպետական իրավունքով ստացված տեղեկատվությունը, և բացահայտվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են 1-ին պարբերությունում նշված հարկերը գնահատելով կամ գանձելով, հարկադիր գանձումով կամ դատական հետապնդումով, բողոքարկումներ քննելով: Այդ անձինք կամ մարմինները տեղեկատվությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկատվությունը դատական դռնբաց նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

3. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներից և վարչական գործելակերպից չբխող վարչական միջոցներ.

բ) ներկայացնելու տեղեկատվություն, որն ստացվել է այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ վարչարարության բնականոն ընթացքում.

գ) ներկայացնելու տեղեկատվություն, որը բացահայտում է որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք, կամ առևտրային գործընթաց, կամ տեղեկատվություն, որի բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հանրային կարգին):

4. Եթե Պայմանավորվող պետություններից մեկը դիմում է տեղեկատվություն ստանալու համար սույն հոդվածի դրույթների համաձայն, ապա մյուս Պայմանավորվող պետությունը օգտագործում է տեղեկատվություն հավաքագրելու իր միջոցները՝ ստանալու այն տեղեկատվությունը, որի համար դիմել է մյուս Պայմանավորվող պետությունը, նույնիսկ եթե այդ մյուս պետությունն իր սեփական հարկային նպատակների համար չունի այդպիսի տեղեկատվության անհրաժեշտություն: Նախորդ նախադասությունում պարունակվող պարտավորությունը ենթարկվում է 3-րդ պարբերությամբ սահմանված սահմանափակումների, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես թույլտվություն՝ Պայմանավորվող պետությանը խուսափելու տեղեկատվություն տրամադրելուց բացառապես այն պատճառով, որ այն չունի այդպիսի տեղեկատվության նկատմամբ ներքին հետաքրքրություն:

5. 3-րդ պարբերության դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես թույլատրող Պայմանավորվող պետությանը՝ խուսափելու տեղեկատվություն տրամադրելուց, միայն այն պատճառով, որ տեղեկատվությանը տիրապետում է բանկը, այլ ֆինանսական հաստատությունը, գործակալությունում աշխատող թեկնածուն կամ անձը կամ վստահված անձը, կամ այն պատճառով, որ այն վերաբերում է անձի սեփական շահերին:

Հոդված 27

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի սահմանափակում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր նորմերին կամ հատուկ համաձայնագրերի դրույթներին համապատասխան տրամադրված հարկային արտոնությունները:

Հոդված 28

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցում են միմյանց, որ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ իրենց ներպետական օրենքներով պահանջվող ընթացակարգերը կատարվել են: Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ ծանուցումներից վերջինն ստանալու օրվանից:

2. Սույն Կոնվենցիան կիրառվում է՝

i) -աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո ստացված եկամուտների նկատմամբ.

ii) -եկամտի կամ գույքի մյուս հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ցանկացած հարկային տարվա ընթացքում վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

Հոդված 29

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մնում մինչև Պայմանավորվող պետության կողմից դրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է, դիվանագիտական ուղիներով, դադարեցման մասին գրավոր ծանուցում ներկայացնելով, դադարեցնել Կոնվենցիայի գործողությունը՝ այն ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո մինչև ցանկացած օրացուցային տարվա վերջը:

Այդ դեպքում Կոնվենցիան դադարեցնում է իր գործողությունը՝

i) -աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցումը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1–ին կամ դրանից հետո ստացված եկամուտների նկատմամբ.

ii) -եկամտի կամ գույքի մյուս հարկերի առնչությամբ՝ ծանուցումը հանձնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1–ին կամ դրանից հետո սկսվող ցանկացած հարկային տարվա ընթացքում վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Երևանում 2010 թվականի հոկտեմբերի 11-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն, սլովեներեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնության դեպքում, գերակայում է անգլերեն տեքստը:

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ

Հայաստանի Հանրապետության և Սլովենիայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիան ստորագրելու պահին ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, համաձայնության են եկել հետևյալ դրույթների շուրջ, որոնք կազմելու են Կոնվենցիայի անբաժանելի մասը:

1. 4-րդ հոդվածի 3-րդ պարբերության առնչությամբ՝

Համաձայնեցված է, որ «փաստացի կառավարման վայր» ստեղծելիս այն իմաստով, ինչպես նշված է 4-րդ հոդվածի 3-րդ պարբերությունում, այն հանգամանքների շարքում, որոնք, ի թիվս այլ հարցերի, կարող են հաշվի առնվել, ներառվում են. այն վայրը, որտեղ ընկերությունը փաստացի կառավարվում է կամ վերահսկվում, այն վայրը, որը տնտեսական և գործառութային տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ընկերության կառավարման հարցում, և այն վայրը, որտեղ պահվում են հաշվապահական գրանցամատյանները:

2. 5-րդ հոդվածի 4ա) և 4բ) պարբերությունների առնչությամբ՝

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4ա) և 4բ) պարբերությունների նպատակներով՝ «առաքում» տերմինը

վերաբերում է այն դեպքերին, երբ այն հիմնված է մինչև առաքումը առկա գործարքի վրա:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Երևանում 2010 թվականի հոկտեմբերի 11-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն, սլովեներեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնության դեպքում, գերակայում է անգլերեն տեքստը:

Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2013 թ. ապրիլի 23-ին: